

ՂԱՐԱՐԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՀԵՉՅՈՒՆԱՅԻՆ ՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Իրենցից ի՞նչ են ներկայացնում Ղարաբաղի բարբառում և նրա խոսվածքներում ը՛հ և ը՛հ — նշաններով արտահայտած հնչյունները, որոնց վերաբերյալ դիտողություններ են արվել մասնագիտական գրականության մեջ: Գոյություն ունե՞ն այդպիսի հնչյուններ, թե ոչ, իսկ եթե գոյություն ունեն, դրանք ի՞նչ գիրքերում են արտասանվում, ունե՞ն հնչույթային արժեք:

Այս հարցերը պարզելու համար դիմենք Ղարաբաղի բարբառին նվիրված ուսումնասիրություններին: Դեռ 1890-ական թվականներին Ղազարոս Աղայանը իր «Ղարաբաղի բարբառի բառարան» աշխատության մեջ համառոտակի քննության է առել բարբառի շեշտը, հնչյունական համակարգը և ձայնավորների փոփոխությունը: Այս աշխատությունը թերի է (բաղկացած 67 էջից) և ձեռագիր վիճակում պահվում է գրականության ու արվեստի թանգարանում:

Ընդհանուր առմամբ նշենք, որ Աղայանի բառարանում ը՛հ, ը՛հ հնչյունների մասին չի խոսվում. ը՛-ի փոխարեն գործածված է ը, իսկ ը՛-ի փոխարեն՝ ե, ինչպես՝ պ՛րնէլիք<բանալիք, պըրզըճ՛ըրիլ<պարզաջրել, մէս<միս, վէն-նը<ոտն և այլն:

Ղարաբաղի բարբառի մյուս կարևոր ուսումնասիրությունը պատկանում է պրոֆ. Հր. Աճառյանին¹:

Պրոֆ. Հր. Աճառյանի մոտ տարբերակված է ը՛ հնչյունը:

Հնչյունաբանության բաժնում նա նշում է է-ի և ի -ի հետևյալ փոփոխությունները.

«<է>ը՛ ինչպես՝ կըէս՝ կէս, կըէր՝ կէր:

Ի>ը՛, ինչպես՝. մըէր՝ մի, կաղնըէ՝ կաղնի, ամըէս՝ ամիս, մըէս՝ միս, ծըէրան՝ ծիրան, սըէրտ՝ սիրտ:

Ո>ը՛ (միշտ վ ձայնէն հետոյ) ինչպես թըբավըէր՝ թագաւոր, շընհավըէր՝ շնորհաւոր, սըվըէրիլ՝ սովորիլ, վըէա՝ հոտ, վըէղ՝ հող: >վը (միավանկ թե բազմավանկ բառերուն սկիզբը). ինչպես. վըէրս՝ որս, վըէննը՝ ոտն, վըէխ-ճար՝ ոչխար, վըէսկըէռ՝ ոսկոր»²:

Ղարաբաղի բարբառի հաջորդ ուսումնասիրողը պրոֆ. Ա. Ղարիբջանն է իր «Հայ բարբառագիտություն» աշխատությամբ: Այդ աշխատության մեջ տարբերակված է միայն ը՛ հնչյունը, որը և տեղ է գտել բերված նմուշներում, ինչպես՝ ոտն> վըէննը, որ> վըէր, որցակ> վըէրցակ, կռիւ> կըռըէվ, ամիս> ամըէս, հոտ> վըէտ, տըէսնում ա «տեսնում է», մըհըէգ՝ «այժմ», տըէղ, «տեղ», ամըէն «ամեն», մըէր «մեր», ապըէր» մեծ հղբայր», մըէռնէմ «մեռնեմ», քըջասըէրտ «քաջասիրտ», մըէխ «գամ», տըէղն էր քըէզ «քեզ տեղն էր», մըէծ «մեծ» (բացատրությունը մերն է — Ս. Ա.)³:

¹ Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. ք. 1911, էջ 61—75:

² Նույն տեղում, էջ 63:

³ Ա. Ս. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 235—36, 242:

Ղարաբաղի բարբառի հետագա ուսումնասիրությունները պատկանում են Ա. Գրիգորյանին և Կ. Դավթյանին⁴։ Այս հեղինակներից առաջինի մոտ գրության մեջ չեն արտահայտված ը^է, ը^է հնչյունները։

Կ. Դավթյանը ոչ միայն տարբերակել է այդ երկու հնչյունները, այլև, ը^է-ն համարելով երկբարբառային հնչյուն, նշել է նրա տարբեր հնչումներ, որի մասին գրում է. «Երբև կոշտ է, ըստ որում, մի դեպքում է թեթև է լսվում (ը^է), մյուս դեպքում կարծես լրիվ (ը^է)»։ «Երբև ապացուցելու համար նա բերում է հետևյալ օրինակները՝ մըէր մեհր», «ըէգնը սահնա», կարպըէա եկապերտ», «մըէկնէլ մեհկնէլ» (բացատրությունը մեհրն է — Ս. Ա.)⁵։ Նա բարբառի բոլոր խոսվածքների համար տարբերակում է ի^է (ը^է — Ս. Ա.) հնչյունը, որի մասին գրում է. «Երբև ը-ին մոտեցող ի. ինչպես՝ հի^էքի՝ վէրիլ, պի^էցի^էրցընէլ (պիցի^էրցի^էիլ, ճիլատիլ) ճիլատէլ, Անդի^էրի...»⁶։

Ը^է հնչյունի մասին մենք խոսել ենք մեր մի անտիպ հոդվածում («Բոլնիս-Խաչենի խոսվածքի հնչյունաբանությունը»)։ Այն համարել ենք ձայնավոր հնչյուն և բերել հետևյալ օրինակները՝ բաժանել> պը^էժանէլ, չարչարէլ> չը^էրչարել, դիմանալ> տը^էմանալ, կիրակի> գը^էրէգի, ագրիւրաչուր> ըխպը^էրաճուր, դէպի> դը^էրի/դը^էբա^է։

Ը^է հնչյունը մենք չենք տարբերակել, թեև զգացել ենք, որ է ձայնավորից առաջ և շփականներից հետո հորանջը ծածկելու համար հնչվում է մի թույլ ը^է։ Մեր կարծիքով ը^է հնչյունի ձևավորման հիմնական նախադրյալը այս պետք է համարել։

Ը^է և ը^է հնչյունները կան Մեղրու, Հաղրութի, Ղարաբաղի, ինչպես նաև այլ բարբառներում։

Շամախու բարբառում կա միայն ի^է (ը^է), իսկ Կարճևանում և Կաքավաբերդում՝ ը^է։

Հիշյալ բարբառների ուսումնասիրողներն այդ հնչյունները դասել են ձայնավորների շարքում։

Պրոֆ. է. Աղայանը գրում է. «Երբ, որ ներկայացնում է է և ը ձայնավորների միջին աստիճանը կա նաև Ղարաբաղի բարբառում»։ «Ի^է (ը^է — Ս. Ա.) ներկայացնում է բ և ի ձայնավորների միջին աստիճանը, այսինքն՝ վեբիե բարձրացման ը է (ընդգծումը մերն է — Ս. Ա.)⁸։

Ինչպես երևաց այս ընդհանուր, համառոտ ակնարկից, որոշ ուսումնասիրողներ (Ղ. Աղայան, Ա. Գրիգորյան) ը^է և ը^է հնչյունները Ղարաբաղի բարբառում չեն արտահայտել գրության մեջ, որոշ ուսումնասիրողներ արտահայտել են միայն ը^է-ն (Հր. Աճառյան, Ա. Ղարիբյան), Կ. Դավթյանը ոչ միայն տարբերակել է ը^է և ը^է հնչյունները, այլև նշել է միևնույն ը^է-ի ներքերանգներ⁹, մենք միայն տարբերակել ենք ը^է-ին։

Այժմ տեսնենք, թե ինչ դիրքերում են հանդես գալիս այդ հնչյունները։

4 Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, 1957։ Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ, 1966։

5 Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 18։

6 Նույն տեղում, էջ 16։

7 Հր. Աճառյանը նշում է, որ Բոլնիս-Խաչենի խոսվածքը նույնն է Շուշեցոց խոսվածքի հետ (տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 62)։

8 է. Աղայան, Մեղրու բարբառը, էջ 17։

9 Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 37։

Նախ խոսենք ըբ մասին:

Պրոֆ. է. Աղայանը, խոսելով Մեղրու բարբառում ըբ-ի ձևավորման մասին, գրում է. «Բառամիջում և զեղջնականկում սովորաբար ծանր ձայնավորներից առաջ կամ հետո մնում է ը, իսկ թեթև ձայնավորներից առաջ կամ հետո դառնում է ի» (ըբ — Ս. Ա.)¹⁰:

Այսպիսով, Մեղրու բարբառում ըբ-ին գոյանում է գաղտնավանկ ը-ից, ինչպես նաև՝ ա>ա, ե>բ փոփոխություններից (զանգակ>զէնգակ, սեռ>զի՛նգէկու): Այդպես է նաև Ղարաբաղի բարբառում, այն տարբերությամբ, որ այստեղ վերջնականի ը-ն մնում է ը: Բառամիջում ոչ բոլոր դեպքերում է գաղտնավանկ ը-ն դառնում ըբ. եթե բառն սկսվում է ձայնեղ պայթական և ձայնորդ կապակցությամբ գաղտնավանկ ը-ն մնում է անփոփոխ, ինչպես՝ բռինը> փռէշնր, բռնել> փռնէլ, բրդել> փրթիլ, գլուխ>կլօխ. գրել>կ՛րիլ և այլն: Բառամիջի ը-ի ըբ հնչյունն ոչ միայն նպաստում են թեթև ձայնավորները (ներդաշնակութան, օրենք), այլև պայթականների քմայնացումը: Այսպիսով, Ղարաբաղի բարբառում ըբ հնչումը կապած է ոչ միայն ձայնավորների ներդաշնակության, այլև հին հայերենի ձայնեղ պայթականների քմայնացման հետ, որոնք բարբառում հանդես են գալիս խլացած ձևով: Մեր կարծիքով հին հայերենի ձայնեղ պայթականները նախքան խլանալը ունեցել են քմայնացած արտահայտություն, որը պահպանվել է խլանալուց հետո ևս: Ուրեմն՝ ըբ արտաբերելու համար կարևորը ոչ թե ձայնեղ պայթականների խլանալն է, այլ՝ քմայնանալը: Այդ ապացուցվում է սակավաթիվ այն բառերով, որոնք պահպանել են հին հայերենի ձայնեղությունը, բայց ունեն քմային արտասանություն և ըբ հնչում, ինչպես՝ դէպի> դժբէրի||դ՛բա (դրափոխությամբ՝ բ՛բէրի||բ՛բա, դէպ ի ետ>դ՛բէտ||դ՛բէտ: Այստեղ միաժամանակ հանդես են գալիս (ակոմոդացիայի) խոսքի օրդանների հարմարեցման և ներդաշնակության օրենքները, որոնք փոխադարձաբար պայմանավորում են մեկը մյուսին: Ղ. Աղայանը բաճալիք և յլարգաշքել բառերը գրել է պ՛բէիլիք, պըրգըմ՛ըրիլ, որոնք արտասանվում են պ՛բէիլիք, պըրգըմ՛ըրիլ: Այստեղ առաջին բառի քմային պ՛-ն և երկրորդ բառի քմային ճ՛-ն, ըստ հարմարեցման օրենքի, իրենց են հարմարեցրել ը-ն (ըբ), որն իր հերթին ներդաշնակվում է ե-ի հետ՝ հին հայերենի ա-ից առաջացած:

Ի միջի այլոց նկատենք, որ այդ նույն օրենքներով բարբառիս մեջ ե, օ, ու, հնչյուններն ունեն իէ, ի*, ի" հնչյունները. ինչպես՝ ըբրան>պ՛էրան>պ՛իէրան, բեռ>պ՛էոնը>պ՛իէոնը, բողկ>պ՛օխկը>պ՛ի*խկը (պ՛օխկը), գող>կ՛օղ>կ՛իօղ (կծղ), բուրդ>պ՛ուրթ>պ՛ըի*րթ (պ՛ուրթ), դուբ>սիուբ>սիի*բ (սիուբ)¹¹:

Ըբ հնչյունի բացատրության հարցն ավելի կնճռոտ է:

Բոլոր ուսումնասիրողները միաձայն հաստատում են, որ Ղարաբաղի բարբառում փակ վանկի ի-ն դառնում է է, հետևաբար այդ կանոնի տակ պետք է դասել հետևյալ բառերը՝ ծին> ծէն (ծնվելը), ծիծ> ծէծ, ծիրտ>

¹⁰ Նույն տեղում, էջ 226:

¹¹ Ղ. Աղայանը իր բառարանում նման հնչյունները համարում է «նուրբ ձայներ», այսինքն՝ քմայնացած ձայնավորներ, որոնք գրել է հետևյալ ձևով՝ ա = իա, է = իէ, ու = իու, օ = իօ:

ծէրտ, միս> մէս, միտք> մէտք, վիզ> վէզ, սիրտ> սէրտ, կռիւ> կըռէվ, սինձ> սէղնը, կիր> կէր, ամիս> ամէս և այլն:

Անհասկանալի է մնում, թե ինչու այս կանոնին ենթարկվող բառերի մի մասը է-ի փոխարեն ստանում է ը, ինչպես՝ միս> մըէս, սիրտ> սըէրտ, կռիւ> կըռըէվ, ամիս> ամըէս և այլն:

Մեղրու բարբառի համար պրոֆ. է. Աղայանը սահմանել է կանոններ. «ի-ն միավանկ և բազմավանկ բառերում ծ-ից հետո կամ ա; գ-ից առաջ դառնում է ը»¹² կամ «Միավանկ բառերում կ-ից հետո, ե, է, ի ձայնավոր-ները դառնում են ը»¹³:

Եթե այս կանոններն ընդունենք նաև Ղարաբաղի բարբառի համար, որոնք, անշուշտ, վերաբերում են նաև նրան, դարձյալ անհասկանալի է մնում՝ սիրտ> սըէրտ, միտք> մըէտք և այլ բառերում ը-ի առաջացումը, որոնք Մեղրու բարբառում ունեն է հնչումը:

Հայտնի է, որ հին հայերենի բառակազմի ու-ն և բառամիջի վո, ւո կապակցությունները դառնում են վէ. ինչպես՝ որս> վէրս, ոչխար> վէխճար, սովորիլ> սըվէրէլ, թաղաւոր> թըքավէր, որոնք ունեն նաև ը հնչումը, այսպես, օրինակ՝ Կրասնոսելսկիի Թթուջուր գյուղի խոսվածքում (որոնց նախնիները տեղափոխվել են Շամշադինից) ո, վո, ւո կապակցությունները միշտ հնչվում են վը, ինչպես՝ ոտն>վըննը, ոչխար>վըխճար, ոսկոր>վըէսկուռ, սովորիլ>սըվըրիլ, թաղաւոր>թաքավըր, շնորհաւոր>շընհավըր և այլն¹⁴, որոնք բուն բարբառում հնչվում են նաև պարզ է-ով կամ հնչյունափոխված ձևով, ինչպես՝ ոտն>վէննը, ոչխար>վէխճար, ոսկոր>վէսկուռ, շնորհաւոր>շընհավուր և այլն:

Նկատի ունենալով այս հարցի շուրջը պրոֆ. է. Աղայանի սահմանումները, ինչպես նաև պրոֆ. Հր. Աճառյանի դիտողությունները, մենք տալիս ենք մեկ ընդհանուր սահմանում, որ Ղարաբաղի բարբառում շփականների ուղեկցությամբ է-ն հնչվում է նաև ը, ինչպես՝ մեր> մէր/մըէր, ոտն>վէննը/վըէննը, ամիս> ամէս/ամըէս, սիրտ> սէրտ/սըէրտ, թաղաւոր>թըքավէր/թըքավըր, կէս>կէս/կըէս, հոտ>վէտ/վըէտ, ծիրան>ծիրան>ծէրան/ծըրան, ոչխար>վէխճար/վըէխճար և այլն¹⁵: Այս կանոնից շեղվում են այն բառերը, որոնց է-ին հաջորդում է ղ հնչյունը, ինչպես՝ դէզ>աէզ, թեղի>թէղի, մեղք>մէխկ և այլն, և այն բառերը, որոնք արտասանվում են պայթականների ուղեկցությամբ, ինչպես՝ թեփ>թէփ, կեմ>կէմնը, ցեց>ցէց և այլն:

Վերահիշյալ փաստերը վկայում են, որ ը է և ը հնչյունները գոյացել են պատմական ավելի ուշ ժամանակաշրջանում: Այդ է պատճառը, որ միևնույն բարբառի տարբեր ենթաբարբառներում ու խոսվածքներում, այդ հնչյունները

12 Տե՛ս է. Աղայան, Նշված աշիւ, էջ 37—39:

13 Նույն տեղում, էջ 44:

14 Նշված խոսվածքում հին հայերենի ի-ն փակ և բաց վանկերում միշտ դառնում է ը, ինչպես՝ միս>մըէս, միտք>մըէտք, կիր>կըր, կաղնի>կաղնըի (ծառը) և այլն:

15 Պրոֆ. Հր. Աճառյանը նկատում է, որ է> ը է փոփոխության պարադայում որոշ գյուղերում սկզբնական ը ինչպես՝ ծըզ թեղի, մըր թեփ, մըծ թեփ (բացատր. մերն է—Ս. Ա.), տես Հր. Աճառյան, Նույն տեղում, էջ 63: Մեզ թվում է, որ այդ ձևերը առանձին գործածական չեն, դրանք հանգես են գալիս թեք ձևերում, ինչպես՝ ձեզ. ժէզ/ծըէզ-ծըզ-անա թեզանից, մեզ>մէզ/մըէզ-մըզ-անա թեզանից, մեծ>մէծ/մըէծ-մըծ-անալ թեծանալ:

տարբեր ձևով են դրսևորվել: Այդ մասին է վկայում նաև Կ. Դավթյանի կազմած բառարանը, որտեղ միևնույն բառը դրված է և՛ է-ով, և՛ ը-ով, և՛ ը-ով, և ը՛(ի՛)-ով, ինչպես՝ գիշեր>քըշեր||քը՛շեր, պինդ>պը՛նդ||պէ՛նդ, կեր>կը՛ր||կէ՛ր, կիսատ>կը՛սատ||կէ՛սատ, կիր>կը՛ր||կէ՛ր, թաղաւոր>թաքավը՛ր||թըքավը՛ր և այլն¹⁶:

Պրոֆ. է. Աղայանը ևս հաստատում է, որ այդ հնչյունները (ը՛, ը՛) պետք է, որ ուշ գոյացումներ լինեն, այդ մասին նա գրում է. «նախ կատարված պետք է լինեին ե> է, է> է, ի> է, ալ> է փոփոխությունները համապատասխան օրենքներով, և ապա՝ է> ը՛, այսպես՝ տեսանել> տէ՛սէլ> տը՛սնիլ, միս> մէ՛ս> մը՛ս և այլն»¹⁷: «Ե, է, ի ձայնավորները նախ համապատասխան կանոններով դարձել են է և ապա՝ է-ն, ըստ այս կանոնի (տե՛ս էջ 4, ծանոթ. 10), դարձել է ը՛, այսպես՝ կես>կէ՛ո>կը՛ո, կես>կէ՛ս>կը՛ս, կիր>կէ՛ր>կը՛ր և այլն»¹⁸:

Պրոֆ. է. Աղայանը միաժամանակ նկատում է, որ արդի խոսակցական լեզվում վերականգնվում է նախկին ձևը (նկատի ունի հին հայերենից բարբառին անցած ձևը), ինչպես՝ կեդ>կէ՛դ>կը՛դ>կէ՛դ, կիճ>կէ՛ճ>կը՛ճ>կէ՛ճ, կիր>կէ՛ր>կը՛ր>կէ՛ր և այլն¹⁹:

Այսպիսով, ը՛ և ը՛ հնչյունները ը և է հնչույթներից առանձին լեզվական իմաստներ չեն արահայաում: Մեզ համար միևնույն իմաստը և նշանակություն ունեն գ՛ըբա և գ՛ըբա «դեպի», ճըլօրէլ և ճըլօրէլ «թառամել», պըցրանալ և պըցրանալ «բարձրանալ», թաքավէր և թաքավը՛ր «թաղավոր», կեսաա և կը՛սատ «կիսատ», պեպէգ՛ և պը՛պիգ՛ «բորիկ» և այլն²⁰:

Ինչպես երևում է բերված օրինակներից, ը՛ և ը՛ հնչյունները շփականների ուղեկցությամբ հանդես են գալիս ը և է հնչույթների շրջապատում, փոխարինում են նրանց, բայց առանձին իմաստներ չեն տարբերակում:

Այդպիսի հնչյունները հայ լեզվաբանության մեջ անվանվում են ազատ տարատեսակում (свободное варьирование):

Ուրեմն՝ ը՛ և ը՛ հնչյունները չունեն հնչույթային արժեք. նրանք հանդիսանում են ը և է հնչույթների ազատ տարատեսակում:

ОБ ОДНОЙ ФОНЕТИЧЕСКОЙ ОСОБЕННОСТИ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА

С. А. АЛАВЕРДЯН

Р е з ю м е

В статье автор ставит задачу выяснить фонетическую значимость ը՛ и ը՛ карабахского диалекта. Автор приходит к выводу, что они употребляются лишь в сопровождении аффрикат, не имеют фонетической значимости и находятся в отношении свободного варьирования фонем է и ը:

¹⁶ Կ. Դավթյանը կարծում է, թե ը՛-ից է է-ն առաջացել, իրականում հակառակն է:

¹⁷ Տե՛ս է. Աղայան, նշվ. աշխ., էջ 59:

¹⁸ Նույն տեղում, էջ 45:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ Օրինակները քաղել ենք Կ. Դավթյանի նշված աշխատությունից: